

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՓՈՒԼԵՐՆ ՈՒ ՔԱՅԼԵՐԸ

| | |
|---|---|
| Փուլ 1. Դիմում | <ul style="list-style-type: none">• Քայլ 1: Ծանոթանալ դիմում-հայտի լրացման ուղեցույցին և լրացնել այն• Քայլ 2: Սպասել առարկայական քննության անցկացման մասին ծանուցման (Էլփոստով) |
| Փուլ 2. Առարկայական թեստավորում | <ul style="list-style-type: none">• Քայլ 3: Մասնակցել առարկայական թեստավորման• Քայլ 4: Սպասել թեստավորման արդյունքների վերաբերյալ ծանուցման (Էլփոստով) |
| Փուլ 3. Հարցազրույց | <ul style="list-style-type: none">• Քայլ 5: Մասնակցել հարցազրույցին• Քայլ 6: Սպասել մասնակցության մասին ծանուցման (Էլփոստով) |
| Փուլ 4. ԱԲ-ի ուսուցիչների զարգացման ծրագրի մասնակցություն | <ul style="list-style-type: none">• Քայլ 7: Մասնակցել ծրագրով նախատեսված բոլոր հանդիպումներին և կատարել բոլոր առաջադրանքները• Քայլ 8: Անցնել ծրագրով նախատեսված փորձաշրջանը և իրականացնել հետազոտական աշխատանք |
| Փուլ 5. Գնահատում և հավաստագրում | <ul style="list-style-type: none">• Քայլ 9: Տրամադրել ԱԲ-ի թեկնածու ուսուցիչ թղթապանակը ամփոփիչ գնահատման համար• Քայլ 10: Հավաստագրում |

Փուլ 1. Դիմում-հայտի ընդունում

Քայլ 1: Եթե համապատասխանում եք ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի [ընդունելության պահանջներին](#), ապա անհրաժեշտ է լրացնել [դիմում-հայտը](#) *մինչև 2018 թվականի փետրվարի 1-ը ներառյալ*:

Քայլ 2: Դիմորդի կարգավիճակ ստացած ուսուցիչները փետրվարի 12-ին կստանան ծանուցում առարկայական թեստավորման անցկացման տեղի և ժամի մասին:

Փուլ 2. Առարկայական թեստավորում

Քայլ 3: Առարկայական թեստավորումը կանցկացվի փետրվարի երրորդ շաբաթվա ընթացքում, կենտրոնացված կերպով, ԱԲ-ի քննական կենտրոնի կողմից, որը և պատասխանատու է թեստերի ստուգման և արդյունքների տրամադրման համար: Առարկայական թեստի հարցերին, դրանց բովանդակային բաշխվածությանը, ինչպես նաև թեստի ընդհանուր ձևաչափին կարող եք ծանոթանալ կայքում տեղադրված թեստերի օրինակներից, ինչպես նաև Արարատյան բակալավրիատի ուսումնական ծրագրերի սեղմ տարբերակներից: Առարկայական թեստավորման նպատակն է բացահայտել դիմորդների առարկայական գիտելիքի մակարդակը, ինչպես նաև տվյալ առարկան դասավանդելու հմտությունները:

Քայլ 4: Թեստավորման արդյունքների վերաբերյալ ծանուցումը կուղարկվի բոլոր մասնակիցներին մինչև մարտի 7-ը: Առարկայական թեստավորումը հաղթահարած բոլոր դիմորդները կհրավիրվեն հարցազրույցի:

Փուլ 3. Հարցազրույց

Քայլ 5: Հարցազրույցի փուլը տեղի կունենա մարտի 12-30-ը:

Հարցազրույցի նպատակն է բացահայտել դիմորդների՝ ծրագրին մասնակցելու մոտիվացիան, դասավանդման փիլիսոփայությունը, վերլուծական անդրադարձ կատարելու կարողությունները, զարգանալու պատրաստակամությունը, հաղորդակցվելու հմտությունները և անձնային որակները: Հարցազրույցն իրականացվում է նախապես մշակված հարցաշարով՝ դրան համապատասխան գնահատման սանդղակով:

Քայլ 6: Հարցազրույցի փուլի արդյունքները կամփոփվեն ապրիլի 2-ից 10-ն ընկած ժամանակահատվածում, իսկ վերջնական արդյունքների մասին կծանուցվի ապրիլի 20-ին:

Այս փուլը հաղթահարած դիմորդները կհամարվեն ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման (ԱԲ-ի ՈՒՄՉՀ) ծրագրի մասնակիցներ և կընդգրկվեն ծրագրով նախատեսված աշխատանքներում:

Փուլ 4. ԱԲ-ի ուսուցիչների զարգացման ծրագրին մասնակցություն

Քայլ 7: ԱԲ-ի թեկնածու ուսուցիչները կմասնակցեն ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրով նախատեսված բոլոր հանդիպումներին, դեմ առ դեմ հանդիպումներին և քննարկումներին: Այս փուլը կտևի 5 ամիս:

Քայլ 8: ԱԲ-ի թեկնածու ուսուցիչներն ուսումնառության առաջին 5 ամիսը հաղթահարելուց հետո պետք է մասնակցեն փորձաշրջանին՝ դասավանդելով ծրագրով նախատեսված պարտադիր ժամաքանակ, ինչպես նաև կատարեն դասարանային հետազոտական

աշխատանք: Այս փուլի ընթացքում ԱԲ-ի յուրաքանչյուր թեկնածու ուսուցիչ կունենա մենտոր, ով կաջակցի և կուղղորդի ամբողջ փորձաշրջանի և հետագոտական աշխատանք կատարելու ընթացքում:

Փուլ 5. Գնահատում և հավաստագրում

Քայլ 9: 4-րդ փուլի ավարտին ԱԲ-ի թեկնածու ուսուցիչը պետք է հանձնի գնահատվող թղթապանակը, որը կամփոփի թեկնածու ուսուցչի ծրագրի ընթացքում ուսումնառության արդյունքները: Թղթապանակը ստուգվում է ԱԲ-ի ուսուցչի չափանիշներին համապատասխան 2 տարբեր գնահատողների կողմից:

Քայլ 10: Թղթապանակի ստուգումից հետո արդյունքները ներկայացվում են հավաստագրման հանձնաժողովին: Հավաստագրված ուսուցիչն իրավունք է ստանում դասավանդելու ԱԲ-ի ուսումնական ծրագիրն առաջարկող դպրոցում և դառնալու ԱԲ-ի ուսուցչական համայնքի անդամ:

ԱԲ-ի ուսուցչի զարգացման և հավաստագրման ծրագրի հետ կապված ցանկացած հարցի դեպքում ինչպես էլ ձևով կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 093 52 37 17, կամ գրել ab_teachers@abedu.am էլփոստի հասցեին:

